«Մասնակցային բյուջետավարում՝ հանուն բարեկեցիկ համայնքի »
Փորձագետ-դասընթացավարի
առաջադրանքի տեխնիկական
բնութագիր

Անվանում Դասընթաց երիտասարդական խմբերի հետ

Գործունեության վայր Գ. Ախուրյան, Շիրակի մարզ

Ծրագրի համառոտ նկարագրությունը.

««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ն «Համայնքների ֆինանսիստների միություն» ՀԿ կողմից իրականացվող «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում իրականացնում է «Մասնակցային բյուջետավարում՝ հանուն բարեկեցիկ համայնքի» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է նպաստել կարիքների վրա հիմնված ավելի թափանցիկ բյուջետային արդյունավետ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը՝ Ախուրյանի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ֆինանսական որոշումների մասին իրազեկվածության բարձրացման, բյուջետային գործընթացներին բնակիչների կողմից իմաստալից և տեղեկացված մասնակցության ապահովման միջոցով:

Ծրագրի շրջանակներում հայտարարվում է փորձագետ-դասընթացավարի մրցույթ:

Փորձագետ-դասընթացավարի հիմնական պարտականությունները.

- Ծրագրային թիմի հետ համատեղ ուսուցման մեթոդաբանության, ուսուցողական մոդուլի մշակում
- Ձևավորված 3 երիտասարդական խմբերի անդամների համար դասընթացների անցկացում «Տեղական ինքնակառավարում», «Բյուջետային գործընթաց», «Մասնակցային բյուջետավարում» թեմաներով:

Անհրաժեշտ որակավորումներ

- Տնտեսագիտական բարձրագույն կրթություն,
- Ոչ ֆորմալ կրթության ծրագրերում դասավանդման 3 տարվա փորձառություն,
- Թիմում աշխատելու կարողություն և մոտիվացիա,
- Ուսուցման թեմաների վերաբերյալ հիմնարար գիտելիքների ու տեղեկատվության բարձր մակարդակ

Ժամանակացույցը.

Դասընթացների տևողությունը կլինի 18 ժամ (յուրաքանչյուր դասընթաց՝ 2 օր, 3-ական ժամով)։ Դասընթացների սկիզբը՝ դեկտեմբերի 15, 2016թ.

Դիմումների ներկայացման կարգը.

Պահանջներին բավարարող

փորձագետները կարող են ուղարկել՝

- կենսագրականը (CV)՝ընդգծելով նման առաջադրանքներ կատարելու փորձառությունը,
- հետաքրքրվածության նամակ։

Անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկել**compassgyumri@gmail.com** էլ. հասցեին՝մինչև **դեկտեմբերի 11-ը ժամը 23:59** ՝թեմա բաժնում նշելով ***փորձագետ-դասընթացավար:***

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել «Կոմպասս» ՀԿ գրասենյակ՝ ՀՀ ք. Գյումրի, Անկախության հրապարակ 9ա, 3-րդ հարկ, 1, 3 սենյակ կամ զանգահարել 095160100: